# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 2 | Ապրիլ | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 2 | Ապրիլ | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 4269607594 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

**Պայմանագիր**

| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 6 | 9 | 0 | 2 | 0 | 8 | 7 |

| | | |
|---|---|---|
| [9] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [10] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ | N 1570015001210100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | | |
| [16] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | | N 900011000834 |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |
| [18] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | | |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28158518 ք/գ, | հատ | 1 | 39400 | 39400 |
| Ընդամենը | | | | | 39400 |

| | | | |
|---|---|---|---|
| Առաքող՝ | KALANTARYAN GAYANE<br>7203510093 | Ստացող | |
| | (անունը, ազգանունը) | | (անունը, ազգանունը) |

02/04/2019 15:36:10

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 21 » փետրվարի 2019թ.

քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Ն.Ս.Մանանդյանս, քննարկելով թիվ 28158518 քրեական գործի նյութերը՝

# Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հոկտեմբերի 8-ին ժամը 13:10-ին Արթիկ քաղաքի Անկախության փողոց 2նրբ. տուն 1 հասցեի բնակիչ՝ Մնացական Կառլենի Այվազյանը, ոստիկանության Արթիկի բաժնում հաղորդում է տվել, որ նույն օրը ժամը 02:30-ից մինչև 03:30-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը օգտվելով Արթիկ քաղաքի Բաղրամյան 14/7 հասցեում գործող իրեն պատկանող հացաբուլկեղենի արտադրամասի դռան բաց լինելու հանգամանքից, ապօրինի մուտք է գործել արտադրամաս և գողացել սեղանի վրա դրված իրեն պատկանող ,,ՆՈԿԻԱ,, տեսակի բջջային հեռախոսը՝ պատճառելով 20.000 ՀՀ դրամի նյութական վնաս:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության Արթիկի բաժնի ծառայող Ա.Ալեքսանյանը զեկուցագիր է ներկայացրել, որ Արթիկ քաղաքի Բաղրամյան 14/7 հասցեում գտնվող հացի արտադրամասից Մնացական Այվազյանին պատկանող բջջային հեռախոսը ս/թ հոկտեմբերի 8-ին ժամը 03:00-ի սահմաններում գողացել է Արթիկ քաղաքի Տուֆագործների փողոց տուն 1 հասցեի բնակիչ՝ Սմբատ Սասունիկի Վարագյանը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Սմբատ Սասունիկի Վարագյանը բացատրություն է տվել, որ 2018 թվականի հոկտեմբերի 8-ին ժամը 02:30-ի սահմաններում Արթիկ քաղաքի Բաղրամյան փողոցի 14/1 հասցեում գործող հացի արտադրամասի մուտքի դռան պատուհանից, տեսնելով սեղանին դրված հեռախոսը, այն գողանալու նպատակով դուռը բացելուց հետո մտել է արտադրամաս և սեղանին դրված հեռախոսը վերցնելով հեռացել է:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության թիվ 976-ԱՊ-18 եզրակացությամբ, փորձաքննության տրամադրված ,, NOKIA,, տեսակի ,,301,, մոդելի բջջային հեռախոսի միջին շուկայական արժեքը 2018 թվականի հոկտեմբերի 8-ի դրությամբ, առկա ապրանքային վիճակի հաշվառմամբ գնահատվում է 11.000 ՀՀ դրամ:

Դեպքի առթիվ 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ոստիկանության Արթիկի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 28158518 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել Շիրակի մարզային քննչական վարչության Արթիկի և Անիի քննչական բաժին:

2019 թվականի փետրվարի 20-ին Սմբատ Սասունիկի Վարագյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար:

Ստուգմամբ պարզվել է, որ Սմբատ Սասունիկի Վարագյանը անցնում է ,,Արթիկ բժշկական կենտրոն,, ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետի հաշվառումներով՝ ,,անձի և վարքային խանգարումներ ալկոհոլի գործածման հետևանքով,, ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ,

ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. 28158518 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրան նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ մեղադրյալ Սմբատ Սասունիկի Վարագյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարքը կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ է տառապել և ե՞րբվանից,

բ/ եթե Սմբատ Սասունիկի Վարագյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկե՞լ է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

գ/ մեղադրյալ Սմբատ Սասունիկի Վարագյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ինչպիսի՞,

դ/ եթե մեղադրյալ Սմբատ Սասունիկի Վարագյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկու՞մ է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից,

ե/ մեղադրյալ Սմբատ Սասունիկի Վարագյանը մեղսունա՞կ է, սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ,

զ/ մեղադրյալ Սմբատ Սասունիկի Վարագյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում և հակացուցված չէ՞ արդյոք բուժումը:

3. Եթե փորձաքննության ընթացքում առաջանան հարցեր, որոնք կարող են օգտակար լինեն քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Թիվ 28158518 քրեական գործի նյութերը փորձագետին կտրամադրվի լրացուցիչ:

**Ավագ քննիչ՝ Ն.Ս.Մանանդյան**